ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/52

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 03.04.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 03.04.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Նորք-Մարաշ» ԲԿ» ՓԲԸ-ն 2018 թ. մարտի 20-ի թիվ 2 որոշմամբ՝ «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27» ծածկագրով բաց մրցույթի մասին, որի հրավերի թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինները ախտահանիչ նյութեր են հանդիսանում:

Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Պատվիրատուն ներառել է ձեռքբերվող ապրանքի բաղադրության կոնկրետ տոկոսային և բառային պահանջներ, որոնք հանդիսանում են կոնկրետ արտադրողի՝ ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի արտադրության՝

կոնկրետ բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցների նույնականացնող տվյալներ, տարբերվում են այլ արտադրողների կողմից արտադրվող համարժեք ախտահանիչ միջոցների բաղադրության մեջ մտնող և միևնույն քիմիական կազմը ունեցող ազդող նյութերի կոնկրետ տոկոսներից:

Գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելով՝ «Նորք-Մարաշ» ԲԿ» ՓԲԸ-ն չիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չի խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

Բացի այդ, Պատվիրատուն գնման առարկայի հատկանիշները կազմել է այնպես, որ նրանք պահանջ և հղումներ են պարունակում կոնկրետ արտադրողի՝ կոնկրետ առևտրային նշանին, սակայն թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով գնման առարկաների հատկանիշների բնութագրերը չեն պարունակում «կամ համարժեք» բառերը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջին:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի թիվ 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Նորք-Մարաշ» ԲԿ» ՓԲԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27» ծածկագրով բաց մրցույթի մասին հայտարարությունը և «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2018թ. մարտի 20-ի թիվ 2 որոշմամբ հաստատված՝ «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի հրավերը թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով, և դիմելով ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին խնդրում է՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու բաց մրցույթի ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում՝ հրավերի թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով, և փոփոխելու հրավերի թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների «Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը» սյունակներում առկա պահանջները՝ այնտեղից հեռացնելով ներառված կոնկրետ տոկոսային տվյալները, որոնք խտրական են, չիմնավորված

խոչընդոտներ են առաջացնում գնումների գործընթացում մրցակցության համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր բոլոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն Սմբատ Բալասանյանը:

2. «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.04.2018թ. թիվ 130 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում, ներառյալ նաև գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերում, առկա չէ որևէ հղում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 13-րդ հոդվածի՝

-1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Հրավերի տեխնիկական բնութագրերը չեն հակասում նշված կետերից որևէ մեկին: Պատվիրատուն բնութագրերը կազմել է իր կարիքին համարժեք և բնութագրերում ներառել այնպիսի որակական չափանիշներ, որոնք անհրաժեշտ են և ոչ խտրական:

Ամփոփելով ներկայացված տեղեկությունները և հիմնավորումները գտնում ենք, որ ընթացակարգի հրավերը, այդ թվում գնման առարկայի բնութագրերը կազմված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի բոլոր պահանջների պահպանմամբ և մասնակցի բողոքը անհիմն է:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.04.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից 04.04.2018թ. թիվ 130 գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 13.04.2018թ. ներկայացրած՝ ի լրումն Բողոքի գրությունը.

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի մաս կազմող Պայմանագրի նախագծի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սահմանվել են հետևյալ բովանդակությամբ.

• 1-ին չափաբաժին. «Ախտահանիչ նյութ. Փաթեթավորումը. 1 լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարայով: Բաղադրությունը-ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի-ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակութամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ, որի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով: PH-5,0-8,0: Պետք է լինի ոչ առավել թունավոր քան հետևյալը՝ ստամոքս ընկնելիս և մաշկի վրա քսվելիս պատկանում է 4-րդ դասի քիչ վնասակար նյութերին, որովայն ներթափանցելիս՝ 5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին: 1 լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ազդեցությունը գրամդրական և գրամբացասական մանրէների նկատմամբ (ներառյալ՝ տուբերկուլոզի միկոբակտերիաները), հակավիրուսային ազդեցությունը (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները) և հակասնկային ազդեցությունը (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) մինչև 15 րոպեում: Կիրառման նպատակը. նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, երեքը մեկում միաժամանկ: Պատվիրատուն կիրառում է լուծույթը ըստ մեթոդական հրահանգի՝ 0.5%-անոց, որը ապահովում է հակաբակտերիալ վարակազերծումը (ներառյալ տուբերկուլոզը) 15 րոպեում: Պիտանելիության ժամկետները ոչ պակաս քան արտադրողի փակ տարայում՝ 3 տարի, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր: Պետք է ունենա ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները, որակի հավաստագիր:»:

• 2-րդ չափաբաժին. «Ախտահանիչ նյութ. Փաթեթավորումը. 1 լիտրանոց, գործարանային արտադրության փակ տարա դիսպենսրով, տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5 մլ, մեկ հիգենիկ մշակումը ոչ ավել քան 3 մլ- մինչև 30 վրկ., մեկ վիրաբուժական մշակումը ոչ ավել քան -6 մլ - մինչև 90 վրկ., մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում, 1լ նախատեսված է 333 հիգենիկ կամ 167 վիրաբուժական մշակման համար: Կիրառման նպատակը՝ ձեռքերի հիգիենիկ և վիրաբուժական մշակման համար: Բաղադրակազմը. դենատուրացված էթանոլ 60%-75%, իզոպրոպանոլի առկայության դեպքում՝ քանակը չգերազանցի 5%-ը, պարունակում է խոնավեցնող,

հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել, մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝ օժտված բարձր թափանցելիությամբ, տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չպետք է պարունակի հոտավետ բաղադրիչներ: Ախտահանիչ նյութի pH-5,5: Թունավորության և անվտանգության ցուցանիշները՝ 4-րդ, 5-րդ դաս: Ախտահանիչ նյութը պետք է ունենա մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ: Պիտանելիության ժամկետը 3 տարի: Պետք է ունենա ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները, որակի հավաստագիր:»:

- 3-րդ չափաբաժին. «Ախտահանիչ նյութ. Փաթեթավորումը - 750 միլիլիտրանոց գործարանային փակ տարայով, ցողացրիչ անվտանգության փականով: Բաղադրությունը - Դիդեցիլդիմեթիլամոնիումիքլորիդ-0,14%, պոլիհեքսամեթիլենբիգուանիդհիդրոքլորիդ-0,096% և այլ հավելումներ, չպարունակի սպիրտ: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) նկատմամբ և այլ մանրէների նկատմամբ: Հակաբակտերիալ ազդեցությունը՝ 3 րոպե, հակավիրուսային ազդեցությունը՝ 5 րոպե, հակատուբերկուլյոզային ազդեցությունը՝ 15 րոպե: pH-5,0-7,0,: Նախատեսված է հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, ստացիոնարներում, լաբորատորիաներում և այլն փոքր մակերես ունեցող առարկաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, բժշկական սարքավորումների (այդթվում՝ կուվեզներ) և այլ մակերեսների ախտահանման և մաքրման համար: Թունավորության աստիճանը-4-րդ, 5-րդ դաս: Պետք է ունենա ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգ, որով պետք է հաստատված լինեն ներկայացված ցուցանիշները, որակի հավաստագիր:»:

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Պատվիրատուի կողմից սահմանվել են ձեռքբերվող

ապրանքի բաղադրության այնպիսի տոկոսային և բառային պահանջներ, որոնք պարունակում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) արգելված հղումներ՝ հանդիսանում են կոնկրետ արտադրողի՝ ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի արտադրության ախտահանիչ միջոցներին, մասնավորապես, ֆրանսիական «Անիոս» ապրանքանշանի կողմից արտադրվող՝ «Անիոզիմ ԴԴ1», «Անիոսժել» և «Սուրֆասեյֆ» ապրանքատեսակներին բնորոշ տվյալներ, տարբերվում են ախտահանիչ միջոցների այլ արտադրողների կողմից արտադրվող համարժեք ախտահանիչ միջոցների բաղադրության մեջ մտնող և միևնույն քիմիական կազմը ունեցող ազդող նյութերի կոնկրետ տոկոսներից: Բողոքաբերի կարծիքով, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից գնման առարկաների բնութագրերի նման սահմանումը անհավասար պայմաններ է ստեղծում Ընթացակարգի հնարավոր մասնակիցների համար, ինչը չի նպաստում վերջիններիս շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը՝ ուղղակիորեն հակասելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

Որպես բերված փաստարկների ապացույց՝ «Խաչպար» ՍՊԸ-ն խորհրդին ներկայացրեց իր կողմից կազմված՝ Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված ախտահանիչ միջոցների և ալ արտադրողների կողմից արտադրված ախտահանիչ միջոցների բաղադրիչների համեմատական աղյուսակը:

Խորհրդում 05.04.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդի այն հարցին, թե կարող է արդյոք բողոքաբերը Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերում մատնանշել Օրենքի իմաստով և նույն Օրենքով արգելված որևէ հղում, Ընկերության տնօրենը պատասխանեց, որ հղում են հանդիսանում Պատվիրատուի կողմից ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերում նշված հենց բաղադրիչների կոնկրետ տոկոսային հարաբերակցությունները, ինչպես նաև ախատահանիչ միջոցներից մեկի բաղադրիչ հանդիսացող «ալֆա ամիլազա» ֆերմենտի առկայության վերաբերյալ նշումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ

մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի

23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Խորհուրդն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չհիմնավորվեց և չապացուցվեց այն հանգամանքը, որ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված՝ գնման ենթակա ապրանքների հատկանիշները պարունակում են հղումներ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չներկայացվեց նաև որևէ ապացույց առ այն, որ վերը նշված բնութագրերում սահմանված հատկանիշները պատկանում են բացառապես բողոքում նշված՝ կոնկրետ արտադրողի կողմից արտադրված ապրանքատեսակներին, և բնորոշ չեն որևէ այլ հնարավոր արտադրողի համանման ախտահանիչ միջոցների համար:

Խորհուրդը գտնում է, որ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/27» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված՝ գնման ենթակա ապրանքների հատկանիշները չեն պարունակում Օրենքի իմաստով հղումներ՝ նշումներ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի վերաբերյալ, հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, հետևաբար նշված մրցույթը չկայացած հայտարարելու իրավական հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.04.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**